

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՅԻԼԼԷՐԻ ՁԵԻԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ.

(Շարունակութիւն)

Դասաւանդման ժամանակ պէտք է մի աշխատանքի մի որոշ աստիճանաւորում պահել, որը բոլոր առարկաների նիւթերի մշակման ժամանակ գործադրուելու յարմարութիւն ունենայ. յիշուած է արդէն, որ դասաւանդման ժամանակ տրւում է աշակերտներին գիտական իմացութիւններ և այնպէս ամբողջացրած, որ գիտութեանը մօտ մնան: Այդ դրութիւնից պէտք է տրամաբանօրէն եզրակացնել այն պահանջը, որ ուսուցչին նախ ծանօթ պէտք է լինի, թէ գիտութիւնները իրենց նիւթերը ի՞նչ եղանակներով, մտածողութեան ի՞նչ մեթոդներով են մշակում կամ գիտական եզրակացութիւնների հասնում, որովհետեւ իմացութեանը վերաբերող մեթոդները գիտութեան և դասաւանդման ժամանակ նոյնն են: Եթէ ճանաչենք գիտութեան մեթոդների տեսակները, ապա այդ ճանաչողութիւնը կունենայ նաև գիշակալիական արժէք: Զաւլվիւրկի այդ նպատակով ձեռնարկած ուսումնասիրութիւնները, թէ գիտութիւնները իրենց նիւթը ի՞նչ մեթոդներով են մշակում, հանգչում են այն կէտին, որ գիտական իմացութիւնները ձեռք են բերւում 1. հաւատի, 2. դեդուկցիայի, 3. ինդուկցիայի և 4. հիպոթեզների միջոցաւ: Ուրեմն գիտական մեթոդները չորս են:

Իմացակազմութեան գլխաւոր մեթոդը Զաւլվիւրկի կարծիքով ինդուկցիան է: Դասաւանդումը, եթէ ցանկանում է նոր իմացութիւնների հասցնել աշակերտներին, պէտք է հետևի ինդուկցիայի օրինակին, որը բոլոր գիտական իմացակազմութիւնների ժամանակ գործ է դրւում: Ինդուկտիւ իմացակազմութեան ընթացքը կատարւում է հետևեալ աստիճանաւորումները. 1. նախ նկարագրութիւն մի մասնակի դէպքի. 2. նման և տարբեր կողմերի որոշելը զանազան դրութիւնների ժամանակ. 3. երևոյթի կապելը պատճառող հանգամանքի հետ: Ինդուկտիւ մեթոդի այս ընթացքը գործադրութեան է վերցւում թէ հոգեկան և թէ բնագիտական—մատեմատիկական իմացութիւնների հետազօտումների ժամանակ, որովհետև այդ բոլոր դէպքերումն էլ գործում են հոգեկան կեանքի նոյն օրէնքները: Դասաւանդումը, որը պէտք է ինդուկտիւ մեթոդի ընթացքին հետևի, կատարելու է հետևեալ աստիճանները. նախ պէտք է մասնակի երևոյթը, ապա երևոյթը զանազան

գրութիւններ մէջ և վերջապէս երեոյթի միջի ընդհանուրը և օրինականը արտայայտէ: Այսպիսով դասաւանդման տեսութիւնը գիտական հիմունքների վրայ է դրւում: Սա դասաւանդման մի երեսն է—տրամաբանական—գիտականն է, դասաւանդումը պէտք է նաև հոգեբանական տեսակէտներ աւելնայ և այդ կարիքին բաւարարէ: Այս երկու տեսակէտներին բաւարարելու և դասաւանդման գործին մի ուղեցոյց տալու համար Զալլվիւրիքը ստեղծում է եռաստիճան դասաւանդման նորմալ ձևեր (աստիճաններ), որի մասին գրում է. «Մեր դասաւանդման սխեման (երեքաստիճանեանը) տարբերւում է Յիւլէրինիցը նրանով, որ մերը իմացութիւնների կազմակերպման տրամաբանական ընթացքին է հետևում»:

Թէև Զալլվիւրիքը իր դասաւանդման աստիճանների հիմնաւորման համար այլ հիմքեր է գործադրում քան Յիւլէրը, սակայն առաջին դիդակտիկական աշխատանքների հետևանքները էականապէս չեն տարբերւում վերջինից:

Օ. Մեսսմէր.

Յիւլէրեան դպրոցի վերաբերմամբ նոյնպէս քննական դիրք ունի քանի որ այս համեմատաբար երիտասարդ հեղինակը: Նա համարեա մանկավարժական բոլոր էական խնդիրներում չի հաշտւում Յիւլէրեանների հետ և նոյն իսկ հակառակ է այն տեսակէտին, որին համաձայն էին մինչև այժմ նկարագրած բոլոր մանկավարժները, այն է, որ դասաւանդման մի որոշ մնայուն աստիճանաւորում պէտք է լինի: Այժմ կը նկարագրենք Մեսսմէրի այն կարծիքներից մի քանիսն, որոնք յատկապէս Յիւլէրի տեսակէտների դէմ են ուղղուած:

Յիւլէրը իր ուսուցիչ Հերբարտի պէս այն կարծիքին է, թէ մանկավարժութիւնը «փոխարկուած հոգեբանութիւն է», ուստի դիդակտիկան պարտաւոր է հիմնուել հոգեբանական օրէնքների վրայ: Մեսսմէրը այն մանկավարժների կողմն է, որոնք ցանկանում են դիդակտիկան տրամաբանութեան վրայ հիմնել: Հոգեբանութիւնը և դիդակտիկան նրա կարծիքով տարբեր գիտութիւններ են: Հոգեբանութիւնը ձգտում է հոգումէջ գոյութիւն ունեցող նորմալ կամ աննորմալ երեոյթները ուսումնասիրել, առանց արժէքի տեսակէտներ մտցնելու այդ հետազոտութիւնների ժամանակ: Նա իրաւունք չունի ասելու այս երեոյթը սխալ է, այն ինչ երեոյթը՝ ուղիղ, այս հոգեկան բովանդակութիւնը արժէքաւոր է, այն ինչը՝ ոչ: Դիդակտիկան ևս գործ ունի հոգեկան իրողութիւնների հետ, սակայն նրա տեսակէտները այդ իրողութիւններին մօտենալիս

այլ են. դիդակտիկական աշխատանքի ժամանակ առաջնորդում ու ընթացք ենք տալիս աշակերտի հոգուն մեր նախօրօք դրած նպատակներին համաձայն. մենք ճնշում ենք երեխայի մէջ արթնացող աննօրմալ ձգտումներն և ցանկութիւնները, մենք մի դիտակից ճնշում, հարկադրանք ենք ծանրացնում երեխայի ընդորովին ազատ ու բնականին թողած զարգացման վրայ: Հետեւեալ փոքրիկ օրինակը պարզ ցոյց կը տայ, թէ ինչպէս միեւնոյն երեւոյթի վերաբերմամբ դիդակտիկական և հոգեբանութիւնը տարբեր վերաբերմունք են ցոյց տալիս. հոգեբանութիւնը հետաքրքրւում է, թէ ինչպէս են յառաջանում բնական եղանակով մեր մէջ ծագած գաղափարները, դիդակտիկական հարցնում է ընդհակառակը՝ ինչ եղանակներով ու միջոցներով հնարաւոր է ուղիղ ու տրամաբանական գաղափարներ զարգացնել աշակերտների մէջ:

Դիդակտիկական նորմատիւ բնօյթ ունի. իր մէջ կատարուող աշխատանքի հեռեանքները դնահատում է համաձայն իր դիդակտիկական նորմերի: Տրամաբանութիւնը ևս նորմատիւ է, որը մարդկային մտածողութեան մէջ ապրող օրէնքներով կամ նորմերով մտածման դործունէութեան հետեւանքներն է դնահատում: Դիտական ճշմարտութիւնները հիմնուած են տրամաբանութեան մէջ գործող օրէնքների վրայ, տրամաբանօրէն ճիշտը միեւնոյն ժամանակ դիտական տեսակէտից ճիշտ է: Դիտական դրաղումների ժամանակ անհնար է առանց տրամաբանական միջոցների որ և է նիւթ մշակել. տրամաբանական մեթոդները դիտական արժէք ունեն. տրամաբանութեան անալիզ, սենթէզ, արստրակցիա և այլն մեթոդները դիտութիւնների համար ևս էական և անհրաժեշտ են:—Դիդակտիկայի նպատակն է դիտական իմացութիւններ տալ մշակումների եղանակով, ուստի և նա հարկադրուած պէտք է գործածի այն ընդոր մեթոդները, որոնք դիտութիւնների նիւթերի մշակման ժամանակ դեր են խաղում: Իսկ որովհետեւ դիտական մեթոդները հէնց տրամաբանական մեթոդներն են, ուստի և դիդակտիկայի համար օրինակելի պէտք է լինին այս վերջինները: «Դիտութիւնների տրամաբանական մեթոդները դիդակտիկական արժէք ունին, որովհետեւ դիդակտիկայի ժամանակ միեւնոյն նպատակներին ենք ձգտում»: Այս կերպ դիդակտիկան փոխանակ սուրեկտիւ հոգեբանականի վրայ հիմնուելու, ինչպէս այս ցանկանում էր Յիլլէրը, հիմնւում է օրեկտիւ — դիտական տրամաբանականի վրայ:

Յիլլէրն ու իր դպրոցը այն կարծիքին են, թէ իմացութիւնների կազմուելու համար միմիայն մէկ մեթոդ դոյութիւն

ունի, այն է ձեռնական աստիճանները: Մեսսմէրի կարծիքով ուսուցիչը բաղմաթիւ ընդհանուր արժէք ունեցող սկզբունքներ ունի, որոնք յարմար տեղին և ժամանակին պէտք է դործադրէ և նախօրօք չի կարելի ասել, թէ այդ սկզբունքները ինչպէս են իրարու յաջորդելու, ինչպէս այդ Յիւլէրն է ցանկանում: Մեթոդները բաղմապիսի են, նիւթերի որակը նոյնպէս բաղմապիսի է. ուսուցիչը պէտք է ազատութիւն ունենայ որոշելու, թէ ինչ դէպքում որ մեթոդը ամենից յարմարն է: Յիւլէրեանները մի մեթոդ ունին, միշտ էլ, ամեն մի նիւթի վերաբերմամբ նոյն ընթացքին են հետևելու, որը սակայն ամենամեծ հաւանականութիւնը ունի դպրոցական աշխատանքը շարլօնացնելու: Մեսսմէրը Յիւլէրի ձեռնական աստիճանների մասին մի մանրամասն քննադատական աշխատանք ունի, սակայն այժմ տեղը չէ այդ խնդիրների վրայ երկարել:

(Շարունակելի)

Գ. Էդիկեան